

ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄԸ ԵՎ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ

Մինչ հաղորդակցական մոտեցումից բխող սկզբունքները թվարկելը և վերլուծելը, հարկ է նշել, որ ի թիվս դասական և ժամանակակից օտար լեզուների, մասնավորապես անգլերեն լեզվի մեթոդների, նշվում է նաև հաղորդակցական մոտեցումը: Ամիրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ ընդունված է ոչ թե «հաղորդակցական մեթոդ», այլ «հաղորդակցական մոտեցում» եզրույթը: Ակնհայտ է, որ «հաղորդակցական մոտեցում» եզրույթն ավելի ընդհանրական է և պատահական չէ, որ մեթոդի փոխարեն, հատկապես արևմտյան ավանդույթի շրջանակներում, ընդունված է «մոտեցում» «approach» եզրույթը:

Պատճառը այդպիսի մոտեցման կարելի է հասկանալ, եթե նկարագրում և վերլուծում ենք հաղորդակցական մոտեցմանը վերաբերող սկզբունքները և բացահայտում ենք «մեթոդ» և «մոտեցում» հասկացությունների բովանդակային բնութագրերը համապատասխան ենթատեքստերում: Ըստ մեթոդիստ Ա.Գ.Աստվածատրյանի, օտար լեզուների ուսուցման մեթոդիկայի պատմության մեջ «մեթոդ» հասկացությունը օգտագործվում է երկու տարբեր իմաստներով՝ ա/ որպես մեթոդական համակարգ կամ մեթոդական ուղղություն /ընդհանուր իմաստով/ և բ/ որպես ուսուցման եղանակներից մեկը /մասնավոր իմաստով/: Առաջին դեպքում մենք խոսում ենք քերականական-թարգմանական, ուղիղ, խառը, գիտակցական-համադրական և ինտենսիվ մեթոդների մասին: Երկրորդ դեպքում, ավելի մասնավոր իմաստով, «մեթոդ» տերմինի հասկացությունը հենվում է դիդակտիկայի տվյալների վրա:» /1, 43/.

Ա.Գ.Աստվածատրյանը իր հետագա շարադրանքում, խոսելով մեթոդների և սկզբունքների մասին, ուղղակիորեն չի նշում «հաղորդակցական մոտեցում» եզրույթը: Սակայն նա մի ամբողջ բաժին է նվիրում «ուսուցման հաղորդակցական ուղղվածության սկզբունքի» քննարկմանը: Ա.Գ.Աստվածատրյանի կողմից կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ «ուսուցման հաղորդակցական ուղղվածության սկզբունքը» ներառում է իր մեջ շատ «պահանջներ», որոնք բնորոշ են հաղորդակցական մոտեցումից բխող սկզբունքներին, նախ և առաջ բովանդակային առումով:

Կարևոր է նշել, որ «ուսուցման հաղորդակցական ուղղվածության սկզբունքը» և «հաղորդակցական մոտեցում» եզրույթները ունեն ընդհանուր բովանդակային տարրեր և/կամ եզրեր առաջին իսկ հայացքից: Դրա հետ

մեկտեղ, այդ հասկացությունները ունեն թե ծագումնաբանական, թե մեթոդաբանական, թե բովանդակային-գործառական ավանառու տարբերություններ:

Առաջին տարբերությունը ոչ միայն տեսական է, այլև մեթոդաբանական: Բանն այն է, որ խորհրդային մեթոդական ավանդույթի շրջանակներում սկզբունքներն են նախորդում մեթոդներին, և դա բացատրվում է նախ և առաջ այն հանգամանքով, որ օտար լեզուների դասավանդման մեթոդական դիտարկվում է խորհրդային ավանդույթի կողմից որպես մասնավոր մեթոդիկա, իսկ դիդակտիկան որպես ընդհանուր ուսուցման տեսություն կամ ընդհանուր մեթոդիկա: Դրանից հետևում է, որ օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի սկզբունքները, և ոչ միայն սկզբունքները, այլև մեթոդները ածանցվում են դիդակտիկայի սկզբունքներից: Ինչպես գիտենք, այդ ավանդույթի շրջանակներում առաջադրվում է սկզբունքների հիերարխիկ, ստորակարգային համակարգ, որտեղ սկզբից գալիս են դաստիարակության և ուսուցման սկզբունքները, հետո միայն մասնավոր մեթոդիկաների սկզբունքները:

Արևմտյան ավանդույթի շրջանակներում պատկերն այլ է: Այստեղ, հիմնականում օտար լեզուների դասավանդման մեթոդիկան հանդես է գալիս ավելի շատ որպես ինքնուրույն գիտության ոլորտ, և եթե խորհրդային ավանդույթն օտար լեզուների դասավանդման մեթոդիկան համարում է մանկավարժական գիտությունների ճյուղերից մեկը, ապա արևմուտքում /անգլո-ամերիկյան ավանդույթ/ օտար լեզուների դասավանդման մեթոդիկան ավելի շատ կիրառական լեզվաբանության, կիրառական հոգեբանության յուրահատուկ արտահայտությունն է:

Օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի պատմության տեսանկյունից վճռորոշ նշանակություն ունի տվյալ ավանդույթների համեմատական վերլուծությունը՝ այս կամ այն սկզբունքն ու մեթոդը դիտարկելիս: Այստեղ առանձնահատուկ նշանակություն ունի ոչ միայն այն հանգամանքը, թե որ մեթոդաբանական կամ տեսական մոտեցումն է դրական կամ բացասական, արդիական կամ ոչ արդիական, այլ նաև այն, թե ինչպես օգտվել այդ պայմանականորեն բաժանված մեթոդական ավանդույթներից:

Մի բան է ակնհայտ, որ թե ուսուցման, թե՝ «ուսուցման հաղորդակցական ուղղվածության սկզբունքի», թե «հաղորդակցական մոտեցում» եզրույթներում հանգուցային հասկացություն է «հաղորդակցություն» եզրույթը:

Սեկ այլ հայտնի խորհրդային մեթոդիստ՝ Գ.Վ.Ռոզովան, իր լայն տարածում գտած «Անգլերենի դասավանդման մեթոդիկա» "Methods of Teaching English" մանկավարժական և օտար լեզուների ֆակուլտետների համար նախատեսված ուսումնական ձեռնարկում չի հիշատակում «հաղորդակցական սկզբունք», ոչ էլ «հաղորդակցական մեթոդ կամ մոտեցում» հասկացությունները, չնայած նրա ուսումնական ձեռնարկը ռուսերեն և անգլերեն տարբերակ-

ներով լույս է տեսել 1970 թվերի սկզբներին: Այդ ժամանակ արևմտյան գիտաուսումնական ուղղվածություն ունեցող մամուլում լայնորեն ընդունված է «communicative approach» «հաղորդակցական մոտեցում» եզրույթը:

"Contemporary methods" «ժամանակակից մեթոդներ» բաժնում հեղինակը խմբավորում է ՕԼԴՄ-ի մեթոդները 1/ ավանդական (traditional methods) 2/ լսողա-լեզվական (audio-lingual methods) մեթոդների: Ներկայացնելով audio-lingual methods, Ռոզովան հիշատակում է "social communication" «հասարակական հաղորդակցություն» եզրույթը: Հատկանշականն այն է, որ այդ փաստը մեթոդաբանական տեսանկյունից այնքան էլ պատահական չէ:

Ինչպես հայտնի է, 1960-70-ական թվականներին խորհրդային հանրակրթական դպրոցում կրթության մախարարության կողմից ընդունված էին Ստարկովի անգլերեն լեզվի դպրոցական դասագրքերը, որոնք ուղղակիորեն գրված էին ուղիղ մեթոդի հիմնական սկզբունքներով: Ռոզովան կողմնակից լինելով ուղիղ մեթոդի կիրառմանը դպրոցում, ավելի շատ թվարկում է այն տեսությունները, որոնք սկիզբ առնելով ուղիղ մեթոդից, հիմք են ծառայում "audio-lingual" «լսողա-լեզվական» մեթոդի համար: «Հաղորդակցական ակտ», «հաղորդակցական իրադրություն» եզրույթները օգտագործվում են նրա կողմից, երբ նա ներկայացնում է audio-lingual method-ը լսողա-լեզվական մեթոդը /4, 20-21/:

«Օտար լեզվի դասավանդման սկզբունքները» "Principles of Foreign Language Teaching" – ՕԼԴՄ-ի սկզբունքները բաժնում նույնպես, Ռոզովան չի հիշատակում «հաղորդակցական մոտեցում» եզրույթը: Ընդ որում, նա թվարկում է դիդակտիկական գիտակցականության, ակտիվության, զննականության սկզբունքները, իսկ «հաղորդակցական մոտեցում» եզրույթը ոչ մի տեղ չի հիշատակվում:

Արևմտյան մեթոդական գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հաղորդակցական մոտեցումը 1/ համարվում է մեթոդ, երբ խոսք վերաբերում է առանձին առարկաների դասավանդմանը կամ ուսումնառությանը և 2/ համարվում է նորագույն, ժամանակակից ավանդական և նոր մեթոդները համադրող, ընդհանրացնող մեթոդ: Այսինքն, մի դեպքում այն հանդես է գալիս մեթոդական մակարդակում, մյուս կողմից մեթոդաբանական:

Վ.Լ.Լիթվիլովի մենագրությունը «Լեզվի հաղորդակցական ուսուցումը» "Communicative Language Teaching" նվիրված է հաղորդակցական մոտեցման կիրառման տեսական և գործնական խնդիրներին: Ինչպես նշում է նա, «այսպես կոչված հաղորդակցական շարժումը սկզբնավորվել է 1970թ. սկզբներին /3, 4/: Հաղորդակցական մոտեցման տեսանկյունից, ուսուցման նպատակն է հաղորդակցական ունակությունը (communicative ability):

Ըստ Լիթվուդի, հաղորդակցական մոտեցման առանձնահատկություններինց մեկն այն է, որ այն լեզվի գործառական տեսանկյունը միավորում է լեզվի կառուցվածքային տեսանկյան հետ: Սա նոր մոտեցում է ոչ միայն տեսական, այլև մեթոդաբանական տեսանկյունից:

Շատ կարևոր է ցույց տալ, թե ինչ է հասկանում հեղինակը լեզվի կառուցվածքային և գործառական տեսակետ կամ հայեցակետ ասելով:

Ըստ հեղինակի, լեզվի կառուցվածքային տեսակետ կենտրոնացնում է քերականական համակարգի վրա, նկարագրելով այն ուղիները, որոնցում լեզվական հարցերը միավորվում են /3, 1/:

Օրինակ, այն բացատրվում է կրավորական սեռ առաջացնող գործառությունները: "The window has been broken" «պատուհանը կոտրվել է» ներգործականի փոխարեն "Somebody has broken the window" «ինչ-որ մեկը կոտրել է պատուհանը» և նկարագրում է բառակարգի կանոնները, որի միջոցով մենք տարբերում ենք "The girl chased the boy" «աղջիկը հետապնդում է տղային», "The boy chased the girl" «տղան հետապնդում էր աղջկան»: Ներըմբռնողական գիտելիքը այսպիսի քերականական երևույթների մասին և այլ բազում լեզվական փաստերը և գործառությունները կազմում են լեզվակրի լեզվական իրազեկությունը, և որի միջոցով նա կարողանում է կազմել նոր նախադասություններ այն իմաստներով, որոնք նա ուզում է արտահայտել:

Նոր կառուցվածքային տեսանկյունը չի կարող փոխարինվել գործառական տեսանկյունից: Որպեսզի հստակորեն պատկերացում կազմենք, թե ինչ տարբերություն կա կառուցվածքային և գործառական տեսակետների միջև, Լիթվուդը բերում է մի հետաքրքիր օրինակ: Նա առաջարկում է վերլուծել "Why don't you close the door?" «Ինչու՞ չես փակում դուռը» նախադասությունը կառուցվածքային և գործառական տեսակետներից: Կառուցվածքային տեսանկյունից այդ նախադասությունը միանշանակ հարցական է: Շատ քերականագետներ, ըստ նրա, կարող են դա նկարագրել տարբեր եզրույթներով, բայց ոչ ոք չի վիճարկում, որ դա իր քերականական ձևով պատմողական կամ հրամայական է: Գործառական տեսանկյունից դա երկիմաստ է: Որոշ հանգամանքներում այն հանդես է գալիս որպես հարց: Օրինակի համար, խոսողը կարող է իսկապես ցանկանա իմանալ՝ ինչու իր խոսակիցը երբեք չի փակում դուռը: Այլ դեպքերում այն հանդես է գալիս որպես հրաման, ասենք այն դեպքերում, երբ ուսուցիչն ուզում է իմանալ, ով է դուռը բաց թողել: Լինում են իրադրություններ, երբ այդ նախադասությունը, երբեմն սխալմամբ, մեկնաբանվում է որպես խնդրանք, առաջարկություն, բողոք: Այլ խոսքերով ասած, եզրահանգում է հեղինակը. «Քանի որ նախադասության կառուցվածքը հաստատուն է և պարզ, նրա հաղորդակցական գործառությոն տարբեր է և կախված է յուրահատուկ իրադրական և սոցիալական գործոններից» /3, 2/:

Հաշվի առնելով այն փաստը, որ հաղորդակցական մոտեցումը ինչ-որ տեղ հաջող համադրումն է ոչ միայն տարբեր մեթոդներին համապատասխանող սկզբունքների, այլև տարբեր մանկավարժական, դիդակտիկական, լեզվաբանական, հոգեբանական և մեթոդական հայեցակետերի, ամիրաժեշտություն է առաջանում թվարկել արևմտյան գիտական հանրության կողմից ընդունված հաղորդակցական մոտեցման սկզբունքները:

1. Հնարավորին չափ օգտագործել իսկական լեզուն, ինչպես որ այն իրական ենթատեքստում պիտի ներմուծվի, օրինակ, առաջարկվում է թարմ շաբաթաթերթեր բերել, որոնք պարունակում են սպորտին կամ մշակույթին վերաբերող սյունակներ: Այսինքն՝ ուսուցանվող լեզուն պիտի լինի ժամանակակից:

2. Հաղորդակցական իրազեկության մի մասն է կազմում խոսողի կամ լսողի մտադրությունը պարզաբանելը: Օրինակ, աշակերտներն ընդգծում են լրագրողի ավելի որոշակի կամ անորոշ կանխագուշակումները:

3. Ուսուցանվող լեզուն ոչ թե ուսումնասիրության առարկա է, այլ հաղորդակցության շարժանիվ:

4. Մի գործառույթը կարող է ունենալ տարբեր լեզվական ձևեր:

5. Աշակերտները պիտի լեզվի հետ աշխատեն տեքստային (discourse) կամ նախադասությունից վեր (suprasentential) մակարդակում: Նրանք պիտի սովորեն կապակցել և համաձայնեցնել նախադասությունները և համախմբող, հարակցող (cohesion and coherence) լեզվական ունակություններ ունենան: Օրինակ, աշակերտներն աղավաղում են լրագրային հոդվածը:

6. Խաղերը կարևոր են, որովհետև ունեն որոշակի ընդհանուր գծեր իրական հաղորդակցական իրադրությունների հետ: Դա հետապնդում է հաղորդակցական նպատակ: Ըստ այս սկզբունքի, ուսանողը լեզվական խաղ է խաղում:

7. Աշակերտին պիտի հնարավորություն տրվի արտահայտել իր գաղափարներն ու կարծիքները:

8. Կարևոր է ոչ թե խոսքի ճշտությունը, այլ սահունությունը, այսինքն՝ սխալները հաղորդակցական տարբեր մակարդկաներում ներելի են: Հետաքրքիրն այն է, որ աշակերտի սխալը կարող են չնկատել ոչ միայն աշակերտները, այլև ուսուցիչը:

9. Ուսուցչի ամենակարևոր պատասխանատվությունն է ստեղծել հաղորդակցությանը նպաստող իրադրություններ: Օրինակ, հանձնարարվում է հորինել մի փոքրիկ պատմվածք կամ կատարել մի առաջադրանք:

10. Հաղորդակցությունը խրախուսում է համագործակցությանը: Դա հնարավորություն է ստեղծում, որ աշակերտներն աշխատեն «բանակցող նշանակության վրա» (negotiating) .

11. Արտահայտություններն իմաստավորելիս կարևոր է հաղորդակցական իրադրության սոցիալական ենթատեքստը:

12. Հաղորդակցական իրազեկության կարևոր մասն է կազմում լեզվական ձևերը համապատասխանորեն օգտագործել սովորելը:

13. Հաղորդակցական գործունեության ժամանակ ուսուցիչը հանդես է գալիս որպես խորհրդատու:

14. Հաղորդակցվելիս, ուսուցիչը ընտրության առաջ է կանգնում ոչ միայն ինչ, այլև ինչպես ասել:

15. Ուսուցանվող քերականությունը և բառապաշարը ընտրվում է ըստ գործառույթի, իրադրական ենթատեքստի և խոսակիցների դերերի:

16. Աշակերտները պիտի յուրացնեն լեզուն ինչպես լեզվակիրներ: Օրինակ, տնային առաջադրանք է տրվում, որ աշակերտները լսեն ռադիոյով կամ այն դիտեն հեռուստացույցով:

Այսպիսով կարելի է պնդել, որ հաղորդակցական մոտեցումը ներկայացնում է նոր մեթոդաբանական մակարդակ: Համապատասխան ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հաղորդակցական մոտեցումը ինչ-որ տեղ հաջող համադրումն է ոչ միայն տարբեր մեթոդներին համապատասխանող սկզբունքների, այլև տարբեր մանկավարժական, դիդակտիկական, լեզվաբանական, հոգեբանական և մեթոդական հայեցակետերի: Սկզբունքային նշանակություն ունի այն փաստը, որ աշակերտները հնարավորին չափ պիտի օգտագործեն իսկական լեզուն, և ուսուցանվող լեզուն պիտի լինի ժամանակակից: Ընդ որում մի գործառույթը կարող է ունենալ տարբեր լեզվական ձևեր: Արտահայտություններն իմաստավորելիս կարևոր է հաղորդակցական իրադրության սոցիալական ենթատեքստը: Աշակերտները պիտի յուրացնեն լեզուն ինչպես լեզվակիրներ:

Հաղորդակցական իրազեկության մի մասն է կազմում խոսողի կամ լսողի մտադրությունը պարզաբանելը: Օրինակ, աշակերտներն ընդգծում են լրագրողի ավելի որոշակի կամ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աստվածատրյան Մ.Գ. Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա, Եր., 1985, 390էջ:
2. Larsen-Freeman, D.(1986). "Techniques and Principles in Language Teaching." Oxford: Oxford University Press.
3. Littlewood, W. T. (1983). "Communicative approach to language teaching methodology (CLCS Occasional Paper No. 7)." Dublin: Dublin University. Trinity College, Centre for Language and Communication Studies. (EDRS No. ED 235 690. 23 pages).
4. Rogova G.V. Methods of Teaching English. Изд-во <<Просвещение>>, 1975.